«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՌԿԱ ԵՂԱՆԱԿՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Դպրոց**) կառավարման խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**)՝ խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Հերիքնազ Տիգրանյանի, Արսեն Մկրտչյանի, Լյուդվիգ Դավթյանի և Նիկոլայ Հակոբյանի կազմով,

մասնակցությամբ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի տեղակալ Արտակ Գևորգյանի,

ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրության 10.9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով,

միաձայն՝

ՈՐՈՇԵՑ՝

- ***Առկա եղանակով ուսուցում անցնող ունկնդիրների անվճար տեղերի քանակը սահմանել** 3 (**երեք**), **որից՝***

1) ***քրեական ուղղվածության՝** 1 (**մեկ**),*
2) ***քաղաքացիական (վարչական) ուղղվածության՝** 2 (**երկու**):*

ՀՀ փաստաբանական դպրոցի
կառավարման խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

23 **մայիսի 2014թ.**
թիվ 5/2-Լ
ք. Երևան